Պետրովիչի հենց յիշեալ ելակէան է, որ նրան մղել է կտակի տեղեկութեան մէջ տեսնելու հակասութիւն եւ այն վերացնելու համար ենթադրութիւն անելու, թէ Սալմասեցին 1550 թուականին պիտի միաժամանակ այցելած լինի Կարոլոս Ե կայսրին եւ Ֆերդինանդ թագաւորին։

Բայց Պետրովիչը չի նկատում, որ իր ստեղծած հակասութիւնն ամենուին էլ չի լուծուում իր տուած մեկնաբանութիւններով, որովհետեւ կտակը Ֆերդինանդին տալիս է ոչ թէ թագաւոր, այլ կայսր տիտղոսը։ Եթէ Սալմասեցին 1550 թուականին գնացած լինէր միաժամանակ թէ՛ Գերմանիայի կայսեր մօտ եւ թէ՛ Բոհեմիայի թագաւորի, կտակում ինչո՞ւ լռութեան պիտի մատնէր Կարոլոս Ե կայսեր անունը եւ յիշատակէր միայն նրան ենթակայ Ֆերդինանդ թագաւորի անունը, այն էլ նրան, Ֆերդինանդին, չպատկանող կայսր տիտղոսով։ Այս փաստերն ասում են, որ Սալմասեցու կտակի ներքին արժէքի գնահատման մէջ նախ Պետրովիչի ելակէան է սխալ եւ ապա՝ այդ ելակէտի հետեւանքով առաջացած հակասութիւնը վերացնելու համար նրա տուած բացատրութիւնը, որը չի պարզաբանում եւ ոչ մի բան։

Ուրեմն, ըստ Սալմասեցու կտակի, նա պապի կողմից ուղարկուել էր Ֆերդինանդ Ա կայսեր մօտ՝ անշուշտ 1558 թուականին կամ յաջորդ տարիներին, երբ կայսերական գահի վրայ էր Ֆերդինանդ Ա-ը։ Այս հետեւութիւնն ամենուին չի հակասում Արետինոսի այն վկայութեանը, թէ Սալմասեցին 1550 թուականին Յուլիոս Գ-ից յանձնարարագիր էր ստացել Կարոլոս Ե-ին ներկայանալու համար[34], որովհետեւ տարբեր դէպք է Արետինոսի յիշատակածը եւ տարբեր դէպք՝ կտակում յիշատակուողը, վերջինս՝ ըստ Մինասովիչի եւ Բժշկեանի աղբիւրների։ Արետինոսի յիշատակած թուականին, 1550-ին, Սալմասեցու գնացած լինելը Կարոլոսի մօտ՝ մենք տարակուսական ենք համարում այն պատճառով, որ այդ շրջանում կայսրութեան քաղաքական դրութիւնն ալեկոծ վիճակում էր՝ բուն Գերմանիայում Լութերական շարժման դէմ մղուող պատերազմներով, որոնք լուրջ մտահոգութեան մէջ պահեցին Կարոլոս Ե-ին՝ մինչեւ Աուգսբուրգի հաշտութիւնը 1555 թ., իսկ Սպանիայում՝ տեղական ազնուականութեան հետ Կարոլոս Ե-ի ունեցած մեծ դժուարութիւններով։ Այդպիսի պայմաններում, ինչպէս երեւում է, 1550 թուականին ծրագրուած այդ ուղեւորութիւնն առկախ էր մնացած եղել մինչեւ Ֆերդինանդ Ա կայսեր (1558–1564 թթ.) օրերը։ Իսկ թէ այս վերջին ժամանակաշրջանում կոնկրետ ո՞ր թուականին է այցելել Սալմասեցին Ֆերդինանդ Ա-ին՝ յայտնի չէ։ Սակայն այս ոլորտներում պարզ եւ անտարակուսելի է միայն մի բան՝ այն, թէ Սալմասեցին դեռ կենդանի էր առնուազն 1558 թուականին, որ է Ֆերդինանդ Ա կայսեր ընտրութեան տարին։

Ստեփանոս Սալմասեցին, ըստ իր կտակի, չորս ամիս մնացել է Ֆերդինանդ Ա-ի արքունիքում։ Այս ժամանակամիջոցի նկատելի երկարութիւնը ցոյց է տալիս, որ նա բանակցութիւնների մէջ էր կայսեր հետ. բայց թէ ի՞նչ ընթացք են ունեցել այդ բանակցութիւնները եւ ինչո՞վ են աւարտուել՝ յայտնի չէ։ Հ. Ն. Ակինեանը, որը Վիեննայի պետական դիւանում նիւթեր չէր գտել 1550 թուականին Կարոլոս Ե-ի հետ Սալմասեցու տեսակցութիւն ունեցած լինելու վերաբերեալ («Վիեննայի պետական դիւանը որ եւ իցէ յիշատակարան չէ պահպանած այս մասին, որչափ քննութիւնքս համոզեցին զիս»)[35], հաւանաբար որեւէ արդիւնքի կը հասնէր, եթէ իր ուսումնասիրութիւնը յատկացրած լինէր Ֆերդինանդ Ա-ի իշխանութեան շրջանին։

Այնուհետեւ 1560-ական թուականներին դարձեալ յիշատակութիւն կայ Ստեփանոս Սալմասեցու մասին եւ այս անգամ տեղեկութիւնը վերաբերում է նրա մահուանը։ Տեղեկութեան աղբիւրը Յիսուսեան հեղինակ Բ. Հերբեսոն է, որը ժամանակակից է դէպքին։ Հերբեսոը, Լուովի հայերի հետ իր ունեցած շփումները նկարա-

---

[34] ՊՍՍ էջ 20–21 եւ 26–27։ PChA p. 93 e 180.

[35] Հ. Ն. Ակինեան, «Աղատութեան շարժումը ԺԵ–ԺԶ դարերուն Հայոց մէջ», Հանդէս Ամսօրեայ, 1917/18, էջ 147։